ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

հունվարի 2025 թվականի №-Ա

«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ԳՈՒՄԱՐ ՓՈԽԱՆՑԵԼՈՒՆ ՊԱՐՏԱՎՈՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2023 թվականի դեկտեմբերի 13-ի №426-Ա որոշմամբ «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրված «Նոր Հաճըն» փոքր հիդրոէլեկտրակայանում (այսուհետ՝ Կայան) բացառապես սեփական կարիքների համար էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0757 լիցենզիայի (այսուհետ՝ ԼԷ №0757 լիցենզիա) պայմանների 9-րդ կետի համաձայն՝ Ընկերությունը պարտավոր էր մինչև 2024 թվականի հունիսի 14-ը Հանձնաժողով ներկայացնել Կայանի կառուցման՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան փորձաքննություն անցած նախագիծը՝ դրական փորձագիտական եզրակացություններով (այսուհետ՝ Նախագիծ), սակայն չի ներկայացրել, ինչի հետևանքով նշված ժամկետը, Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374-Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի (այսուհետ՝ Կարգ) 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, համարվել է երկարաձգված մինչև 2024 թվականի դեկտեմբերի 14-ը,

բ) Ընկերությունը մինչև 2024 թվականի դեկտեմբերի 14-ը Հանձնաժողով չի ներկայացրել Նախագիծը, ուստի Հանձնաժողովը՝ հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը, 2024 թվականի դեկտեմբերի 20-ից հարուցել է վարչական վարույթ՝ Կարգի №3 հավելվածի 7-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն Ընկերության ներկայացրած երաշխիքով սահմանված գումարի կեսը Հայաստանի Հանրապետության պետական

բյուջե փոխանցելու հարցի ուսումնասիրության նպատակով, որի վերաբերյալ Ընկերությունը ծանուցվել է Հանձնաժողովի 2024 թվականի դեկտեմբերի 20-ի №ՄՄ/34.3-Մ2-12/5964-2024 գրությամբ,

գ) Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ արտադրության լիցենզիա ունեցող անձի կողմից լիցենզիայով ամրագրված ժամկետում Նախագիծը Հանձնաժողով չներկայացնելու դեպքում նշված ժամկետը համարվում է երկարաձգված նախկին ժամկետի չափով, բայց ոչ ավելի, քան մինչև լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածի ավարտը, և միևնույն ժամանակ, 2-րդ անգամ երկարաձգվելու դեպքում՝ Կարգի №3 հավելվածի համաձայն, երաշխիքով սահմանված գումարի կեսը փոխանցվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե,

դ) Կարգի №3 հավելվածի 7-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշում է ընդունում երաշխիքով սահմանված գումարի կեսը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցելու մասին, եթե արտադրության լիցենզիա ունեցող անձի կողմից Նախագիծը Հանձնաժողով ներկայացնելու՝ լիցենզիայի պայմաններով ամրագրված ժամկետը, Կարգի համաձայն, 2-րդ անգամ երկարաձգվել է,

ե) Ընկերությունը վարչական վարույթի շրջանակում իր 2025 թվականի հունվարի 16-ի №ՄՇ/1277 գրությամբ, ըստ էության, ընդունել է թույլ տված խախտումը և հայտնել է, որ Կայանի կառուցման նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական եզրակացությունը ստանալուց հետո (ստացվել է 2024 թվականի դեկտեմբերի 6-ին) նախատեսում էր դիմել պետական համալիր փորձաքննության, և ժամանակի սղությամբ պայմանավորված ԼԷ №0757 լիցենզիայի պայմանների 9-րդ կետով սահմանված և երկարաձգված ժամկետում՝ մինչև 2024 թվականի դեկտեմբերի 14-ը Նախագիծը Հանձնաժողով չի ներկայացվել,

զ) վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը ԼԷ №0757 լիցենզիայի պայմանների 9-րդ կետով սահմանված և երկարաձգված ժամկետում՝ մինչև 2024 թվականի դեկտեմբերի 14-ը Հանձնաժողով չի ներկայացրել Նախագիծը և Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, նշված ժամկետը համարվել է 2-րդ անգամ երկարաձգված մինչև 2025 թվականի հունիսի 14-ը, և

հիմք ընդունելով «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետը և Կարգի №3

հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի 7-րդ կետի 2-րդ ենթակետը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Պարտավորեցնել Ընկերությանը՝ Նախագիծը Հանձնաժողով ներկայացնելու՝ ԼԷ №0757 լիցենզիայի պայմաններով ամրագրված ժամկետը Կարգի համաձայն 2-րդ անգամ երկարաձգված համարվելու համար, սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝
   1) մեկամսյա ժամկետում «ԱԿԲԱ ԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության 2023 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 01-716 գրությամբ ներկայացված թիվ 2341988129 բանկային երաշխիքի համաձայն երաշխավորված 550 000 (հինգ հարյուր հիսուն հազար) դրամ գումարից 275 000 (երկու հարյուր յոթանասունհինգ հազար) դրամը 900005028130 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.
   2) քառասունհինգօրյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել 550 000 (հինգ հարյուր հիսուն հազար) դրամ գումարի երաշխիք՝ առնվազն մինչև 2026 թվականի հունվարի 28-ը գործողության ժամկետով:
2. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ՝
   1) Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ ԼԷ №0757 լիցենզիայի պայմանների 9-րդ կետով սահմանված՝ Նախագծի ներկայացման ժամկետը համարվել է 2-րդ անգամ երկարաձգված մինչև 2025 թվականի հունիսի 14-ը.
   2) Կարգի 47-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ 2-րդ անգամ երկարաձգված ժամկետում Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան փորձաքննություն անցած՝ դրական փորձագիտական եզրակացություններով, Կայանի կառուցման նախագիծը Հանձնաժողով չներկայացնելու դեպքում ԼԷ №0757 լիցենզիայի գործողությունը կկասեցվի:
3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը, բացառությամբ՝ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքով նախատեսված դեպքերի:
4. Սույն որոշումը սահմանված ժամկետում կամովին չկատարվելու դեպքում ենթակա է հարկադիր կատարման՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված կարգով:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ

ք. Երևան
հունվարի 2025թ.